

Պ Ա Յ Մ Ա Ն Բ

ՊՈՒԼՏԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 ֆր.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու քիւր մէկ ծրարով
Տարեկան 14 ֆր.
Վեցամսեայ 7 ֆր.

ՍՄԵՐԻԿԱ

Տարեկան 2 60 ծոյ.
Վեցամսեայ 1.50 ծոյ.
ԿԱՆԽԻԻ

ԻՄԱՆՈՒՑՈՒՄՆ 80ԴՐ
20 ՄԵԺ.



Լ Ր Ա Գ Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

ԻՐ ՀՐԱՏԵՐԵՆՈՒՆ ԵՄԵՆ ԶՈՐԵՆԱԿ ԺԻ Ի ԴԱՐԱԹ

Հ Ա Մ Ց Է

Redaction du Journal

«Ira vounk»

(Bulgarie) VARNA

Редация

въ ВѢСТНИКЪ

«Иравунк»

ВАРНА

Գրութիւնք հոս չեն
արուիր

ԶԵՂՈՔ ՀՈՂԻ ՎՐԱՅ

Հաստ անգամներ այս սիւնակներուն մէջ գրած և կրկնած ենք թէ ամեն հայ դաշտավայրի տեղական ազգային գործերը—եկեղեցական, կրթական, բարեգործական—պէտք է կուտակեցան նկատմանը անկասկածելի վարել և ապարել չտալ ու է կուտակեցան թեան որ տեղական ազգային գործերուն մէջ գերիշխող դիրք գրաւէ.

Մենք այս միտքը յայտնած ենք և այսօր ալ կը կրկնենք ոչ թէ միայն կուտակեցանութեան հսկողական ըլլալուն համար, այլ առիթ սա պատճառաւ որ ու է կուտակեցանութեան գերակայութիւնը տեղական ազգային գործի մը մէջ առիթ կուտայ որ ուրիշ կուտակեցանութիւններու կամ խմբակներու պատկանողներ արգելք հանգիստանան այդ գործին կամ գէթ զլրանան իրենց աշակցութիւնը ու նպատակը. ահա միայն այս զրացումը կը բաւէ գործին կազմակերպելու.

Հաս բացատրելու առիթը է թէ մեր եկեղեցիները, վարժարանները, աղքատասիրտները, որբասիրտները և այլն զուրկ ըլլալով հաստատուն եկամուտի աղբիւրներէ, օրուան նուէրներով և ուղարկութիւններով օրը օրին ապրտող աղքատիկ հաստատութիւններ են. երբ այս աղքատիկ հաստատութիւններու ղեկը բնագիտաբար կուտակեցանութիւններէ միայն ձեռքը անցնի անոր շուրջ օրիշ խումբերու հսկողականութիւնը անխառնակ կը գաւնայ ու ժողովուրդի մէջ մտնին նպատակը դադարի, որով ուղղակի գործը կը փնտռէ Այս միշտ փորձառի և ակնհայտ ճշմարտութիւն մըն է, որուն գէթ սկզբունքի, պաշտօնարարի կամ խտէայի խօսքեր առաջ քշելը տնտեսական մտքի ծակ տրամաբանութիւն է.

Մեր քաղաքը հաստատող գործնական օրինակները այսօր աչքի առնելու են. ահա տեղւոյն թաղականութիւնը և ահա Աղքատա-

խնամի Գործ. Ժողովը որոնց արգիւնաւոր գործունէութիւնը կամ պաշտօնավարութիւնը ամեն քրննադատութենէ վեր է և ամեն վառնադարձակ հայտ. համակրանքովը և հետեւաբար նպատակներովը օժտուած. որովհետեւ այդ երկու վարիչ մարմիններու մէջ ալ ու է կուտակեցանութեան գերակայութիւնն չէ տրուած, կամ առեւթ պարզը, բացարձակապէս չէզոք հողի վրայ կատարուած են առնոց ընտրութիւնները. անոնց մէջ թէ և գտնուի այս կամ այն յեղափոխական կուտակեցանութեան համակիրներու ցանցաւ թիւ մը բայց ասանք զերծ ըլլալով կուտակեցանութեան մոլեռանդութենէ երբէք առիթ չեն ընծայեր—գործին սիրտին համար—որ կուտակեցանութիւնը բոլորքուն եւ բնագիտաբար խմբակներ զիրար հարուածելու ապարել գտնեն հոն.

Մեր տեղական այդ երկու մարմիններու չէզոք հողի վրայ կազմութեան շնորհիւ ձեռք բերուած գոհացուցիչ արգիւնքը եւս թելագոսանք մը պէտք է ըլլայ արտասահմանի հայ գաղութներուն և մասնաւորապէս Վառնայի հայութեան, որ յառաջիկայ թաղականութեան և Գաղտնաբարացի ընտրութիւնները չէզոք հողի վրայ կատարեն անպատճառ. որ պէտք ընդհանուրին համակրութենէն և աշակցութենէն չը զրկուեն ազգային հաստատութիւնները և այդ պատճառաւ ալ չը կազան ու չը խանգարուին.

Ա. Ջ. Գ.

Ներկայիս կուգանք ծանուցանել յարգոյ հասարակութեան թէ կամքէ անկախ պատճառներով, 1907 ապրիլ 29ին ի նպատակ հայկական ընթերցարանի շէնքի ունեւորիք վիճակահանութիւնը յետաձգուած է մայիս 27ին

Վարչութիւն
Հայ. Ընթերց.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԻՃԱԿԷՆ

ՎԱՆ 1 ապրիլ

ԻՐ նախորդ նամակաւ արդէն քաղաքի մէջ կառավարութեան նպատակը չէ միայն հարկահաւաքութեան միջոցաւ գրամ հաւաքել այլ նաեւ հայերը երկրէն դուրս գալթեցնել իրաց այս և զանազան հաստատելու համար շատ ապացոյցներ կան. Կառավարութիւնը շատ լաւ գիտէ թէ գիւղացին որչափ իր երկրին կապուած է, և թէ անոր սէրը իր հայրենիքէն պակասեցնելու համար լաւագոյն միջոցն է անոր հողերը ձեռքէն խլել.

Հարկահաւաքները կը տարածուին գիւղերը և տուրք կը պահանջեն գաղթածներու, մեռածներու, վաղ ատաղձացի, միշտ իսկ նորածններու համար.

Իւրաքանչիւր հարկահաւաքի ընկերացած է հարուստ Գիւրտ մը, և երբ գիւղացին դրամ չունենալուն համար չը վճարեր, հարկահաւաքը անոր կը պատասխանէ. «Այս պէջը քեզի համար կը վճարէ, պայմանաւ որ յետոյ անոր վճարես ինչ որ քեզ համար պիտի տայ» Այդ սոսկալի Գիւրտը կը հանէ քսակէն սակին և կուտայ հարկահաւաքին ի ներկայութեան խեղճ գիւղացուն.

Եւ քիչ յետոյ այդ Գիւրտը կը գրաւէ գիւղացուն ինչքը եւ հողերը, Խնուսի մէջ այս օրինակ շատ գործեր պատահեցան և բնակիչները խնդրագրեր մատուցին կառավարութեան որ պատասխանեց թէ բան մը չը կրնար ընել այն պատրուակաւ որ դրամ վճարուած է, և արդէն շատ ուշ է հողերը ետ պահանջելու համար. Սա իրականութիւն է թէ կառավարութիւնը կուզէ երկիրը Հայերէն մաքրել, եւ կառավարութիւնը բացայայտօրէն թոյլատրած է Հայերուն առաւելան հաստակ գրուել, Բայց Ռուսիա չուղեր զանոնք ընդունիլ.

Ինչո Արմէնիա

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՌՈՒՍՆԵՐԸ

Մր. Ռուսերը Սթէտ Լոնտոնի «Ռեվիւ օֆ Ռեվիւ» հանդէսին մեծահաշակ խմբագիրը, որ թէ՛ հայոց բարեկամն է եւ թէ՛ համաշխարհային խաղաղութեան ջատագով, վերջերս Նիւ Եօքքի մէջ դուրսուած խաղաղութեան համաժողովին անդամակցած էր Անգլիացիներու կողմէ.

Ապրիլ 20ին, Պոսթօն այցելութեանը առթիւ, Մր. Սթէտ հարուստ Եւրոպացի Ս. Կիւլէզեանի տունը, ուր հաւաքուած էին Միս Պլէթուէլ ու քսանի չափ հայեր եւ ուրիշ Ամերիկացիներ.

Այդ տան մէջ աշխարհածանօթ հիւրին մէկ գիրքէն քանի մը կտորներ կարդացուելէ յետոյ ինք սկսաւ խօսիլ.

Ահա թէ ինչ խօսած է.

«Ի՞նչ ցաւ ըսել որ ձեր ամենամեծ թշնամիները եւ Արեւելքի չարքներու պատճառ եղողները եղած են իմ բարեկամներս — Անգլիա եւ Ռուսիա. Արեւելքի եւ Հայոց թոյս, որովհետեւ կական պատճառը եղած է Ռուսիոյ եւ Անգլիոյ միջեւ եղած անհամաձայնութիւնը եւ թշնամութիւնը. Յորչափ այդ երկու ազգաց միջեւ վատ զգացումներ կը տիրեն, ցորչափ անոնք բարեկամական համաձայնութեան մը եկած չեն. Հայոց համար ոչ մի յոյս չկայ. Ամեն նամեծ թշնամիներ են Հայոց եւ առաւելագոյն Արեւելքին այն անձեր եւ ազգեր, որ այս երկու ազգերու միջեւ թշնամութիւն ձգել կուզեն, որ ապակցը կըլլան անոնց բարեկամական հասկացողութեան մը գաղտն. ամենամեծ թշնամիներ են Հայոց այն անձեր որ Ռուսիայի ղեմ գրգռել, վիրաւորել խօսքեր կը խօսին կամ զայրացնուր ընթացք կը բռնեն. Առանց Ռուսիայի հաճութեան հայոց համար բան մը չըլլար. Սկիզբէն ջատագով եղած եմ Անգլիայի եւ Ռուսիայի միջեւ բարեկամական յարաբերութեան եւ հասկացողութեան մը հաստատման. Ոչ միայն այս Ռուսիա պէտք է բարեկարգուի, հին ու յիշմար պէտք է փոխուի. եւ այս թէ և կամայ, բայց տեղի պիտի ունենայ.

«Ռուսիոյ կայսրը՝ որոյ հետ հինգ տեղամ սեւակցութիւն ունեցած եմ, մարդասէր եւ չափազանց կրօնասէր մարդ մըն է. Իր մէկ պակասը այն է որ նախաձեռնութեան վրայ չափազանց վստահութիւն ունի. Խնդրեցե՛ք ամեն

նէն բարդ եւ վտանգաւոր ատեն երբ իրեն հարցուի թէ ինչ պիտի լինի ապագան, կը պատասխանէ թէ լաւ պիտի լինի: Ինք կը նաւատայ թէ ինչ որ ըլլայ ծանր բան մը պիտի չպատահի, նախախնամութիւնը ամէն բան «օյ-րայի» պիտի ընէ: Դուռն քեզ օգնէ մատուած ալ քեզ պիտի օգնէ» առածին զէմ սխալ մըն է որ կը գործէ: Ինք իր թերութիւնները ունի բայց մարդասէր է եւ կրօնասէր: Թող զայս գիտէ թէ ինք չունի խառնուածքը բռնապետի մը, անգուր իրականութիւնը կամքի տէր մէկը չէ, բայց երբ համոզուի թէ քան մը իր պարտքն է՝ հաստատ կը կենայ անոր վրայ: Ինք գիտէ թէ Ռուսիոյ պէս ընդարձակ տէրութիւն մը չի կրնար կառավարուիլ մէկ մարդով: Ինք իսկապէս ազատամիտ մարդ մըն է, արդի գաղափարներու տէր: Բացարձակապէս համոզուած է եւ իր արքունիքը իր հետ թէ հին միապետական ընկերային օրերը անցած են եւ Ռուսիան լինելու է սահմանադրական պետութիւն մը, ունենալու է իր սահմանադրութիւնը, Տուման, խօսքի, լը-րագրի եւ կրօնի ազատութիւն: Ինք եւ իր արքունիքը հաստատապէս, ան-դառնայի կերպով որոշած են ունենալ եւ պահել Տուման: Եթէ այս Տուման չյաջողի, երկրորդ մը, երրորդ մը պիտի պիտի կանչէ, վերջապէս Տուման իր գոյութիւնը պիտի ունենայ: Ռուսիայի մէջ բոլոր բանտարկեալները քաղաքա-կան են, ամէն մարդ, գողը մարդա-պանը, աւաղակը ինչ որ ընէ՝ յանուն քաղաքական սղատութեան կրնէ: Ձարը խոստացաւ բոլոր քաղաքական յանցա-ւորները ազատ արձակել բացի վեցէ: Անոնց մէջ մէկն էր Փլէվէն սպանողը, ուրիշ մը, իր Ձարի հօրեղբայրը սպան-նողը, բայց յեղափոխականը պահան-ջեցին որ բոլորն ալ ազատ արձակուին: Այս չափազանց պահանջին պատճառաւ էր, որ Ձարը մերժեց ներում չնորհել: Նախորդ Տուման որ չյաջողեցաւ, նոյն պէս եւ այս նորը՝ յեղափոխականներու լուսաւորանք պահանջին պատճառաւ էր:

«Աւագեցի տեսակ մը միջնորդի գեր կատարել Ձարի եւ յեղափոխականաց միջեւ: Տեսայ թէ Ձարը բանաւոր դիրք մը կը բռնէ, բայց յեղափոխականը ոչ: Առեց կը պահանջեն որ ունենան սահ-մանադրութիւն մը որ իր մէջ ունե-նայ աշխարհի բոլոր սահմանադրու-թեանց լաւ բանի եւ անոնց վրայ՝ իրենց ալ լաւ կարծած բաները եւ այս անմիջապէս: Կուգեն որ Ռուսական ամբողջ պետութեան մէջ ամէն մէկ ռուս եւ ուսումնասիրող, տղէտ կամ ց տուն քուէ տայ եւ քուէով որոշէ

թէ ինչ տեսակ կառավարութիւն ու-նենալու է, կեդրոնացեալ թէ ապա-կեդրոնացեալ, հանրապետական թէ սահմանադրական միապետութիւն: Եւ այս անմիջապէս: Ըսի թէ քիչ մը բա-նաւոր ըլլալու էք, ատենք մէկէն չեն կրնար ըլլալ: Մեր ներկայ փարլամեն-թական զրուծութիւնը 600 տարուայ աշ-խատութեան արդիւնք է: Անոնց մէջ մէ-կը բարկանալով մը ըսաւ՝ ինչ ըսել կուգեն, 600 տարի սպասենք մինչեւ ձեր այժմու վիճակին հասնինք: Ըսի թէ Տուման առաջին քայլ մըն է: Ըսաւ թէ ես կատեմ առաջին քայլերը, ինչ-չու հարցուցի: Պատասխանեց թէ ո-րովհետեւ առաջին քայլերը արդիւնք են երկրորդ քայլերուն: Ըսի թէ գուցէ կուենեաք խօսքի եւ լրագրի ազատու-թիւն, որով իրար քայլ առ քայլ կը պատրաստէք նոր աշխարհ: Ըսի համար՝ Ըսաւ թէ լրագրական ազատութիւն չկայ, ոչ հոս, ոչ Անգլիա եւ ոչ իսկ Ամերիկայի մէջ: Ըսի թէ Անգլիայի եւ Ամերիկայի մէջ լրագրական ա-զատութիւն չկայ, ես կարծեմ Ամե-րիկայի մէջ լրագրական ազատու-թիւնը նոյնիսկ չափազանց է: Ըսաւ ոչ ես նիւ Եօրք եղած իմ: Եթէ նոյն լրա-գիր մը հաստատուի որուն մէջ Եօ-րքը թագաւորը սպաննել ջատագով-ուի՝ Ամերիկեան կառավարութիւնը չը պիտի արգիլէ այդ լրագիրը: Ըսի, այո, արտի արգիլէ: Ուրեմն լրագրական ա-զատութիւն չկայ հոս, զի մարդս իր ուղածը չի կրնար գրել: Ես չեմ մե-ղադրեր այս մարդիկ: Անոնք լաւ եւ կարող մարդիկ են: Անոնց այս ծա-րայեղութիւնը արդիւնք է՝ այն ծա-րայեղ ճնշման որուն ենթարկուած են եղեր ցարդ:

Մնացեալը յաջորդով

Ա. 2 Դ

Խորհուրդս կը փութայ յայտարարել թէ նորակազմ Դպրոցատէր, ընկերու-թեան» Գործադիր Ժողովոյ ընտրու-թեան զէմ բողոքող 33 ազգայնոց մէ-ջէն 7 միայն մտից տուրք վճարած ըլ-լալով, մնացեալ բողոքող ազգայինք եւ ընկերութեանս ուրիշ անդամակցել փափագողը պարտին դիմել Ազգ. Խոր-հրդարան մտից տուրք վճարելու, որ ատեն կարելի պիտի ըլլայ միայն ըստ տրամադրութեան ընդունուած յօդու-ծի իրենց բողոքը նկատողութեան առ-նելու եւ զարմանն անօրինելու:

Թաղ. Խորհուրդ Ս. Սարգիս Եկեղեցւոյ

Կը զտրնէին ոճիւրը մանրամասնօրէն քննելու ու արդիւնքը շուտով տեղե-կագրելու:

Վանի կուսակալը միմիայն ոտքի-կանսութեան միջոցաւ գրութիւն մը կըրցած էր ձեռք բերել... Այդ գրու-թիւնը գտնուած էր Շէվքի փաշայի բարձին տակ: Գրութիւն մէջ յայտարար-ուած էր.

«...Մտաւորապէս տաններէք տա-րի է որ այս իժը ձեռքովս կը սնու-ցանեմ, կը փայփայեմ ու խնամքնե-րուս առարկայ կընեմ:

«Ապառկա էր, վերջին անգամ ըլլալով, ձեռքովս կործանուած ընտա-նիքի մը միակ շառուիղն եղող այս հրէշին աբիւնը կուշտ մը ծծելու ու այն-պէս ծածկուելի ցուրտ հողերուն տակ:

«Այս իժին հայրը զաւակներուս ու սիրական կնոջս արիւնը մտաւ...»

«Եւ վրէժս լուծելու համար սպան-

ՆԵՐՔԻՆ

Մարմնամարդի եռնագ ընկե-ութեան անցեալ շարժում Ռուս-ճուգի մէջ կատարած խաղերը ու հանդէսը շատ յաջող անցան: Հոն Ռուսներէն հրաւիրուած հիւ-րերու եւ պուլկարներու կողմէ փոխանակուած ճառերը երկու դրացի կառավարութեանց միջեւ բարեկամութիւնը ամրապնդելու ընդթիւն ունէին: Հոն պուլկար ճա-ռախօսները յայտարարեցին թէ իրենք մասնաւոր համակրանք մը ունին Ռուսիէն ազգին նկատ-մամբ եւ խնդրեցին որ հիւրերը թարգման հանդիսանան Պուլ-կարներու եղբայրական զգացու-մին պէպի դրացի Ռուսիէն ժո-ղովուրդը:

Վէլքընա Բոքայի մէկ խմբա-գիրը տեսակցութիւն մը ունե-նալով հիւրերէն Մ. Սուլիօթիի հետ, ծանրացած է թէ Ռուս-նիոյ եւ Պուլկարիոյ միջեւ մեր-ձեցում մը անհրաժեշտ է: Երկու ազգերը զինակցելով կարեւոր զինուորական ուժ մը տրամադ-րելի պիտի ունենան: Մ. Սուլի-թի յոյս կը յայտնէ թէ այդ միութիւնը կարճ ժամանակի մէջ պիտի իրականանայ:

Վերջերս Մակեդոնիոյ մէջ սերպ խուճբերու հակապուլկար վարմունքին պատճառաւ որչափ որ Պուլկարիոյ ժողովրդին մէջ մտքերը գրգռուեցան, բայց կա-ռավարութիւնները ջանադիր են բարեկամութիւններ իրարու հետ հաստատ պահելու եւ երկու կողմէն բաղձանք կը յայտնուի խնդիրը բարեկամօրէն կարգա-դրելու առանց վէճի բռնուելու: Մակեդոնիոյ դէպքերուն պատ-ճառաւ:

Աւստրիական թերթերը դիտ-մամբ վէճը մը հրահրեն ու կը տարածայնեն թէ Պէլկարաէն պուլկար ներկայացուցիչը Մ.

Բիզով ետ պիտի կանչուի: Մինչ-դեռ ընդհակառակը երկու կա-ռավարութիւններն ալ որոշած են զգուշանալ ամեն գնով որ անհամաձայնութիւններ չը ծա-գին երկու երկիրներու մէջ եւ պահպանուի խաղաղութիւնը Պալ-գանի մէջ:

Յանքովիսթ կուսակցութիւնը Սօֆիայի մէջ մեծ համախմբում մը ունեցաւ անցեալ կիրակի օր: 4000 պատուիրակներ իշխանա-պետութեան բոլոր կողմերէն Սօֆիա հաւաքուած էին:

Նոյնպէս երկու օր աւելի ա-ռաջ Գարալէլիսթները համա-խմբուած էին Սօֆիայի մէջ: Բայց տեսնուեցաւ թէ բացի 3-4 քա-ղաքական դէմքերէ, մնացեալ-ները անփորձ երիտասարդներ էին:

Այս երկու համախմբումներու նպատակն էր կուսակցութեան կապերը զօրացնել եւ պատրաս-տուիլ տիրող կուսակցութեան մօտալուտ անկումի պարագային ղեկավարութեան կոչուելու եթէ կոչուին:

Ս. Ջատկի առթիւ Ֆիլիպէյի Յոյները առանց եկեղեցիի չը ձգելու համար պուլկար կառա-վարութիւնը որոշած էր անցեալ տարի Յոյներէն գրաւուած եկե-ղեցիներէն երկուքը անոնց վե-րադարձնել: Պոստյ Յունաց պատ-րիարքին հրահանգին վրայ, Ֆի-լիպէի յոյն վարդապետը պա-տասխանեց թէ չէ կարող ըն-դունել միայն երկու եկեղեցի-ները եթէ պուլկար կառավա-րութիւնը չը վերադարձնէ իւ-րաքանչիւր քաղաքի մէջ մէյմէկ եկեղեցի յոյներուն, որոնք ա-ռանց ատոր զրկուած պիտի մը-նան կրօնական արարողութիւն-ներէ: Կառավարութիւնը նկա-տի չառաւ Պատրիարքի այդ պա-հանջը, որով Պուլկարիոյ շատ մը տեղերու Յոյները առանց եկե-

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

73

ԱԽԱԶԱԿԱՊԵՏԸ

ՄԱՆ ԶՈՐՐՈՐԴ

ԿԱՆԱՂԱՆԸ

(Շար. Կաթողիկոս Թիւ. Էն)

Սուլթան Համիտի սիրական Շէվքի փաշայի չարաչար սատակումը սարս-ռեց Բարձրագոյն Դուռն ու զինուորա-կան շրջանակները:

Մեծ Էպարքոսը, մանաւանդ ընդ-հանուր դօրաց Սպարապետը հեռագիրը հեռագրի ետեւէ վանի կուսակալին

վէճերն ու պալատականներ, մի փնտթե ոճրագործին ով ըլլալը...

«Ոճրագործը» ներքինի Ֆուստուն է...

«Վրէժս լուծելու եւ այս սպա-րանքը գերեզման մը ընելու համար համար ձեր մզկիթը գացի ձեր ա-ղօթքները մաւտացի ու անուստ Ֆու-ստ գոչեցի:

«Բայց ես Չէրքէզ մընէի...

«Այն հարազատ ու ցեղային արիւն կրող Չէրքէզներէն էի, որոնց համար իսլամութիւնը պարզապէս խաթակաւն ու մոլի աղանդներով լեցուած հա-ւատք մըն է...

«Արդ, գուցէ ու ձեր փնտթեմը մտա-ծեցէք ու այնպէս իմ հետքերուս ե-տեւէն եկէք:


«Սակից հաքը գերեզման մը միայն ունիմ. . . «օխ», ալ կ'տացած եմ:

ՖՈՒԼԱՏ ՊԷՅ

Այս սարսուղի յայտարարութիւնը

ղեցիի մնացին, և հաւանական չէ որ մօտ ատենէ այդ մասին Յու- նաց նպատաւոր որոշում մը տրուի, երբ անգին, Մակեդոնիոյ մէջ, յոյն աւազակախումբերը կը շարունակեն աւելի վայրագ կերպով հալածել պուլկար գիւղացիին:

ՃԱՐՈՆ ԵՒ ԹՈՒՐԻՔԻԱ



«Թան»ի մէջ կը կարդանք. Պոլիսէն Լօնտօն կը գրեն թէ Ճարոն որ ուսումնասիրող պատերազմէն առաջ ջանքեր կը թափէր Թուրքիոյ հետ զիւսնադիտական յարաբերութիւններ հաստատելու, կը շարունակէ իր դիմումները այս բանին համար: Ճարոնական կառավարութիւնը մինչեւ այժմ լուրջ ընդդիմութեան հանդիպեցաւ, որովհետեւ կը փափաքէ մեծ պետութեանց աստիճանին իրեն հետ վերաբերելը գարիթիստիներու մասին: Այս տեսակէտով Դուռը տրամադիր չէ Ճարոնի զոհացում տալու, վասն զի ինք կը ջանայ ինչպէս գիտենք, որ գարիթիստախումբերը չափաւորուին կամ բոլորովին ջնջուին:

Կը հաստատուի թէ եւրոպական պետութիւնները չեն հակառակիր Պոլսոյ մէջ Ճարոնական զիւսնադիտական պաշտօնարան մը հաստատուելուն:

Անկարիի չէ որ պետութիւններէն ոմանք այս ծրագրին հակառակելու մէջ իրենց շահը ունենան: Ճարոնի զիւսնադիտական մէկ ներկայացուցչին Պոլսոյ մէջ հերկայութիւնը իրապէս հոն պիտի գործնէր: Անգլիոյ դեսպանին գիրքը, անգլո-ճարոն զինակցութիւն մը գոյութիւն ունենալուն պատճառաւ կը յուսացուի թէ իշխան Փաշային որ այժմ Եւրոպա կը գտնուի, իր անձնական ազդեցութիւնը ի գործ պիտի դնէ Դարն առջեւ ճարոնական դեսպանութիւն մը հաստատելու:

Եթէ գարիթիստիներու խնդիրը չըլլար թուրք կառավարութիւնը շատ տրամադիր էր Ճարոնի զոհացում տալու: Թուրք պաշտօնական չըմանակներուն մէջ լաւ կը հասկնան թէ Ճարոն կուզէ Թուրքիոյ հետ զիւսնադիտական կապեր հաստատել առիթի քաղաքական քան թէ վաճառականական յարաբերութիւններ համար: Գիթուրք կայսրու-

կուսակալը պիտի կրնար պահել ոչ այդ պատճառաւ ուզողակի Սպարապետին զրկեց:

Սպարապետը չուարեցաւ... ալ չը մնաց պատրուակ մը իր խղճին հանդէպ:

Միայն թէ, հակառակ փուլէն պէտք չայտարարութեան վերջին պարբերութեան, սպարապետ փաշան խիստ հրամաններ տուաւ կուսակալին որ ամեն ջանք չը խնայուի ոճրագործը գտնալու...:

Կոտորածներու ազեկալի թուականէն ետքը՝ Վանի ամբողջ կուսակալութիւնը չեմ երկիր դի մը մէջ ինկաւ: Ու շատեր սկսան գիշերով թողուլ իրենց տունն ու տեղը եւ գաղթելու որոշում տալ:

Սրտէն զարնուած վիրաւոր վագրի մը պէս կուսակալը իտիզակել կուտար հայերու տուները, բայց իզուր ոճրագործը մնաց մութին մէջ:

Շէվքի փաշայի ապարանքը Կապուէն մեծ հանքի ու Ասորի ազդիւնը Մէլիկէ, Ոստիկանութիւնը կը փնտռէր

թիւնը Ռուսիոյ դրացի է: Սուրբան ալ անձնապէս համակիր է Թուրքիոյ կառավարութեան ծրագրին, վասն զի նա կը յուսայ թէ իսլամ միսթոնարներու բոքարկանքը պիտի կրնայ, չընորհի երկու կայսրութեանց համաձայնութեան, քաջալերութիւն գտնել եւ զարգանալ Ճարոնի մէջ:

ՏԵՂԱԿԱՆ

Տեղույս Թաղ. Խորհուրդը՝ որ երեք տարիներէ ի վեր իր պաշտօնը գոհացուցիչ կերպով վարած է, այլեւս ինքզինք յոգնած զգալով, վերջնականապէս կը հրաժարի եւ որպէս զի նոր Թաղ. Խորհուրդի մը օրինաւորապէս կազմուելէն յետոյ ինք գործէ քաջութի, որոշած է ըստ Թրքահայոց Ազգ. Սահմանադրութեան, ընտրողական ժողով մը կազմել, որ նախ ընտրողաց եւ ընտրելեաց ցանկերը պատրաստէ ու յետոյ ձեռնարկէ ընտրութեան:

Քանի որ Թրքահայոց Ազգ. Սահմանադրութիւնը պիտի ըլլայ ուղեցոյցը այս ընտրութեան, հարկ է յարգել օրինաւորութեան բոլոր պայմանները: Սահմանադրութիւնը որոշապէս կը Եւրոպայէն որ ազգային տուրք վճարողները միայն ընտրելու իրաւունք ունենան, բայց քանի որ ըստ օրէնքի տեսական իմաստին հոս «ազգային տուրք» անունով տուրք մը գոյութիւն չունի, պէտք է օրէնքի բուն ոգւոյն համապատասխան վարուիլ: այն է եւ կեղեցիկ եւ Ազգ. վարժարանի համար տուրքի կամ հանգանակութեան կամ իւզագինի մասնակցողները իրաւունք ունենան քուէարկելու: հետեւաբար ընտրողաց ցանկին պատրաստութեանը առթիւ պէտք է հանգանակութեանց եւ իւզագինի տեսարկները առաջնորդ ունենալ:

Առայժմ այսպիսի, եւ կը վերադառնանք:

ԱՊՈՏՈՍԻՍՏԻԿԱՆ, ՀԱՂԱՍՏԱՆԻ ՍԷՉ



Լօնտրայի մէջ բաւական մտահոգութիւն պատճառել կը թուի Հնդկ. կաստանի օպոստամբական շարժումը: Լահորի չըմանակին մէջ աւելի լուրջ

նաեւ հայուհին, որ անյայտ եղած էր: Եթէ Ձերքէզը փախուցած ըլլար գանդի, ապա սոսնձող պիտի յիշեր իր յայտարարութեան մէջ... քանի որ այդ կեանքի աղջկան մասին բոլոր մը անգամ արտայայտուած չէր, շատ հաւանական էր որ իմացած ըլլար ան ոճրագործութիւնը... Եւ որպէսզի գաղտնիքը մնար ծածուկ՝ ստիպած էր որ հետ տանի:

Սակայն ուրիշ հարց մըն ալ կար: Դռնազանը կը յայտարարէր թէ փուլէն պէտք ապաւանջէն դուրս չորս կիներ փախուցած էր: Նոյնպէս այն գիշերը ֆէրաճէով ծածկուած երեք կիներ բերած էր կառավարին տեղ պաշտօն վարող նորեկ սէրսը:

Եւս հակադէմ ու կնճռոտ հարցերու վրայ, ոստիկանութիւնը կը չիւրաքէր: Վերջապէս, ամբողջ երկու ամիսէն աւելի, իտիզակութիւններ ու բանտարկութիւններ շարունակեցան:


Անօգուտ բան... Կուսակալը տեղեկագրեց թէ սմեն ջանք ապարդիւն մնաց:

կերպարանք մը առած է ապստամբութիւնը: Ասոր պատճառ յոյց կը տրուի Բիւնճաւի թերթի խմբագրներուն գէտ զատ բացուած ըլլալը, այդ թերթը անգլիացի սպաններուն դէմ գրած էր:

Մայիս 2ին խոզու թիւններ ծագեցան Ռաֆաէլ-Բէլի մէջ եւ մայիս 4ին՝ Լահորի մէջ, ուր հարկ եղաւ օգնական ոստիկանութիւնը զրկել նահանգին բոլոր կողմերը: կառավարութիւնը յայտարարեց թէ ամեն տեսակ միթիւններ արգելուած են: Միւս կողմէ ձերբակալուեցան թելադրիները, որոնց պետ է եղեր Լօթաթիւնը: Այս ձերբակալութիւնը Հինտուսներու մէջ մեծ յուզում առաջ բերաւ, կրտսի թէ Լահոր քաղաքը գիւղացիներու գինեւալ խումբերով լեցուած է, այս ալ վրձակին ծանրութիւնը ցոյց կուտայ: Բիւնճաւի կառավարչը զննեց Լահոր ամրութիւնը եւ շատ օգնական զօրք ուղեց:

Անշուշտ անգլիական պետութիւնը այս շարժումով չը վտանգուիր, բայց պէտք է նկատել թէ եթէ ապստամբութիւնը տարածուի, Հնդկաստանի մէջ անգլիական իշխանութիւնը մեծ զոհարարութեանց կը հանդիպին:

ՎԱՌՆԱՅԻ ԱՂԲԱՏԱԽՆԱՄԸ



Վառնայի Աղբատ. Ընկեր. Գործադիր Ժողովս շնորհակալութեամբ ստացած է հետեւեւորները:

Շրջուն գանձանկներէն ձեռած Տիրաք Լեւոն Թաւաճանի եւ Գառնիկ Եղաճանի 49 ֆրանք, Արապչէս Ստեփանեանի եւ Թէլլալ Գէորգի 60, 67 սնդ. Սահակ Աւետիսեանի եւ Աղաթ Թարութիւնեանի 60, 40 սնդ. Լեւոն Սէմէրճեանի եւ Գառնիկ Եղաճանի 48, 47 սնդ. Սարգիս Փափաղեանի եւ Տրդատ Նշանեանի 40, 07 սնդ. Արաճաթ Ներսէսեանի եւ Մարտիրոս Ժամկոչեանի 32 ֆր. Տիրաք Ղարիպեանի եւ Թէլլալ Գէորգի 68 62 սնդ. Արապչէս Ստեփանեանի եւ Հճ. Միւսլան Ձրպուզեանի 63, 30 սնդ. Վազարոս Սալանեանի, Մկրտիչ Պողոսեանի եւ Վոսաճապուհ Թաւաճանի 87, 25 սնդ. Անուան տօնախմբութեան առթիւ Տեաք Ոմի 5 ֆր. Լեւոն Ճէրահեան 3 ֆր. Ոմի 1 ֆր. Ոմի 1 ֆր. Վ. Անտոնեան 1 ֆր. Ա. Նրսեան 1 ֆր. Ե. Փափաղեան 1 ֆր. Տիկ. Գամպուր:

Ուր էր փուլէն պէտք... ուր էին Աւազակապետն ու վրէժէնդի խմբակը:

Պատմեցաւ: Աւազակապետը Սէֆիլ հանրմըն ու Նոնէզարն յանձնեց Վարդգէսին ու ըսաւ:

Աշխատէ որ սիրելիներդ Պարսկաստան անցունես:

Իսկ Նուրիմէն, որ քնիկ կարնեցի էր ու վատարար քաջկոտուած էր այդ ապարանքին մէջ, Լուսիս աղջկան հետ Վանի ամենէն աննշան գեղերէն մինչ տարաւ եւ հաւատարմի անձի մը տրամադրութեան ներքեւ թողուց:

Գալով փուլէն պէտք, անիկա Ձիւնակի խումբին մէջէն գիշեր մը՝ անյայտ եղաւ:

Հետեւաբար քաղքին մէջ միայն Աւազակապետը մնացած էր որ երբեմն քահանայի տարազով, երբեմն պարսիկ վաճառականի ներքեւ հողորստով արձակ համարձակ ման կուղար:

Տէր Աստուած... միմիկն Ուրազակապետն օր մը ինչնիքն. ինչ պա-

եանք 1 ֆր. Գեղամ Տէր Թարութիւնեան 5 ֆր. Տ. Տէօփէթեան 2 ֆր. Երուսեղ Պանճեան 2 ֆր. Ոմի 5 ֆր. Եղաքը Բարեսէր Ոմի 20 ֆր. Լեւոն Սէմէրճեան 1 ֆր. Ա. Գասպեան 2 ֆր. Ոմի 50 սնդ. 2. Մուրաթեան 2 ֆր. Ս. Տաղէսեան 1 ֆր. Ղազարոզ Թահմիզեան 3 ֆր. Մ. Թարութիւնեան 1 ֆր. Մանուկ Գրիգորեան 2 ֆր. Մ. Փափաղեան 1 ֆր. Ղազարոս 4. Ղազարեան 1 ֆր.

Հարսանեաց առթիւ Տիրաք Մամիկոնեանէ 2 ֆր.

Ռուբէն Գրիգորեանի (սկիւրիչ) ճամբորդութեան առթիւ 10 ֆր. Յ. Էնկիպարեան Վարդանանց օրը իւր ննջեցելոց համար 2 ֆր. Մկրտիչ Թորոսեան իւր Հանգուցեալ որդւոյն հոգուն համար 6 ֆր. Մ. Տէօփէթեանէ նուէր 1, 50. Նպարավաճառ Մամասէ 50 սնդ. Հանգուցեալ Սերովբէի յուղարկաւորութեան համար հանգանակուած դրաւ մէ աւելցած, ձեռածը Համարձուած Արահամեանի 16 40 ֆր. Ս. Զատիկ առթիւ Նիկողոս Բէստանեանէ 2 ֆրանք:

(Շարունակելի)

ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

Հայոց թաղը, Տօթ. Բօքովի բընակած տան կից, Վօտէնաքա փողոցի մէջ թիւ 3/809 տունը, որուն պարտէզին կողմը Վիթրասովա փողոցը կելլէ եւ ունի 511 քառակ. մէթր տարածութիւն՝ իր պարտէզով միասին, 6 սենեակներ խոհանոց, մառան, ախոռ եւ այլն կը ծախուի:

Դիմել Տ. ՅԱՎՀԱՆՆԷՍ ԳԱՅԱԶԱՍԷԻ Վառնա

ՆՈՒՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԿԸ ԾԱԽՈՒԻՆ

Հայ ազատութեան ախոյեան հերոսներու գեղատիպ եւ գունաւոր պատկերը եւ «Ջայն Հայրենեաց»ի հրատարակած Հայրիկի պատկերը որ ձրի կը տրուի նաեւ նոր բաժանորդներուն:

Ա.ի գինն է 3 ֆր. Բ.ի գինն է 1.50 Բոսթի ծախքը մեր վրայ կարծէ որ ամեն հայ ունենայ Դիմել սա հասցէիս ԱԻԵՏԻՍ ՄԱՆՈՒԿԱՆ Թալ Եօլու Վառնա

տանեցաւ սա փուլէն պէտքն ու ինչու առանց իտիզակի իմացունելու անյայտ եղած է... Վարդգէսը լեռներու մէջ ապառաժէ մը վար նկտեց ինքզինքը... արդեօք յուսահատական վայրկեան մը ունեցաւ ու անձնատպան եղաւ:

Այս եւ ասոր նման մտայ մտածուածներով կեցած էր այն հրապարակն, ուր Պարսկաստանէն եկած ապրանքները բռնած էին մեծաւ մասամբ ու մեծաքանակ գնումներ տեղի կուներային: անցած էին չորս ամիսներ ոճրիք թուականէն ու քաղաքը բաւական հանգարտած էր ոստիկաններու իրարանցումէն: Կասկածելի նկատուած հայերն ամենքն ալ ազատ արձակուած էին:

Իրիկուան վերջալոյսը գեւ բոլորովին մարած չէր, եւ հրապարակը մարդկային եռուզեռումներով եւ զփառքներով լեցուած էր: Այդ պահուն մաքուր հագուած, վաշիտ, ջ ու յ ջաղկ մարդ մը մօտեցաւ Աւազակապետին եւ միմիկն:

— Ետեւէս եկուր արարկամ:

(Շարունակելի)

Գորհարան Հեճեղանիշի ԲԻԾԱԴԻՄ⁶⁶ — ՌՈՒՍՃՈՒՔ